Մարդատար-տաքսի ավտոմոբիլը պետք է ունենա՝

1) ուղեսրահում՝ ուղևորին տեսանելի մասում տեղադրված տաքսամետր (սակաչափիչ).

2) տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշան.

3) ուղեսրահում՝ տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության և տվյալ ավտոմոբիլի վարորդի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկատվություն (կազմակերպության անվանումը (բացառությամբ ֆիզիկական անձանց), հեռախոսահամարը, վարորդի անունը, ազգանունը).

4) թափքի կողային մասում և ուղեսրահում գնացուցակ, որն առնվազն պետք է ներառի՝ ուղևորափոխադրման նվազագույն արժեքը (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագինը, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին տեղեկատվություն (առկայության դեպքում):

Տաքսամետրը (սակաչափիչ) պետք է ստուգաչափվի կոնկրետ ավտոմոբիլի համար, կնքվի և ամրացվի այդ ավտոմոբիլին: